

14.04. 2011

ՄԵՖ Ինտերնեյշնլ բացել է նոր ներկայացուցչություն

«ՄԵՖ Ինտերնեյշնլ Ունիվերսալ վարկային կազմակերպություն»-ը Եղեգնաձոր քաղաքում բացել է նոր «Վայոց Ձոր» ներկայացուցչությունը Սևակի 4/2 հասցեով:

«Վայոց Ձոր» ներկայացուցչությունը կտրամադրի ձեռնարկատիրական, գյուղատնտեսական և վերանորոգման վարկեր Վայոց Ձորի մարզի համայնքներում:

ՄԵՖ Ինտերնեյշնլը շարունակում է կատարել իր հիմնական առաքելությունը, այն է. գործարար զարգացման և ֆինանսական ծառայությունների տրամադրում ձեռներեցներին՝ իրականացնելու արդյունավետ նախաձեռնություններ ի աջակցություն Հայաստանում երեխաների բարեկեցիկ կյանք հետապնդող ընտանիքներին և համայնքներին:

Հարցումների համար դիմել Ռուզան Չեչենյանին
+37410 577771 հեռախոսահամարով, կամ rouzan_t@sef.am

Լրացուցիչ տեղեկություններ.

ՄԵՖ Ինտերնեյշնլ Ունիվերսալ Վարկային Կազմակերպությունը հիմնադրվել է 1997 թ-ին Վորլդ Վիժն միջազգային քրիստոնեական բարեգործական կազմակերպության կողմից: 2003 թ-ին ՄԵՖ Ինտերնեյշնլը ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից հավատարմագրվեց որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն: ՄԵՖ-ի միակ սեփականատերը ՎիժնՖանդ Ինտերնեյշնլ է՝ Վորլդ Վիժն Միջազգային Բարեգործական Ընկերության միկրոֆինանսական մասնագիտացված կառույցը:

ՄԵՖ Ինտերնեյշնլը ներկայումս ունի երկու մասնաճյուղ Երևանում, մեկական Գյումրիում, Միսիանում, Կապանում, և չորս ներկայացուցչություն՝ Թալինում, Ստեփանավանում, Գորիսում Մեղրիում և Եղեգնաձորում:

Կազմակերպությունը տրամադրում է բիզնեսի և գյուղատնտեսության զարգացման վարկեր, սպառողական վարկեր, ինչպես նաև ֆինանսական խորհրդատվություն: